



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արևիյան 52^ա • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52^а •
52^а Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,
armphilology@ysu.am, www.yasu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 2

ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2023 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Հայ բանասիրության ֆակուլտետի նոր օրինակելի կանոնակարգի հաստատում:
2. 2023-2024 ուստարվա անվանական կրթաթոշակների հավակնորդների հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում է 22-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանը տեղեկացրեց, որ ֆակուլտետի նոր օրինակելի կանոնակարգը նախապես ուղարկվել է ամբիոնի վարիչներին՝ ծանոթանալու, քննարկելու և անհրաժեշտ դիտարկումներ անելու նպատակով:

Ամբիոնների վարիչները իրենց խոսքում փաստեցին, որ նոր կանոնակարգը կազմված է անհրաժեշտ չափանիշների սահմաններում, կանոնակարգի դրույթները հստակ սահմանված են և ընդունելի: Կանոնակարգի համաձայն՝ ֆակուլտետի գիտխորհրդի կազմը մնում է նույն թվաքանակով, ամբիոնների ներկայացուցիչները ընտրվում և ներկայացվում են ամբիոնների կողմից: Ուսխորհուրդը նույնպես կներկայացնի իր թեկնածուներին: Ասվածը ընդունվեց և հաստատվեց միաձայն:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի՝ անվանական կրթաթոշակ ստացող 5 ուսանողներից երկուսը բակալավրիատում ուսումնառությունը ավարտելուց հետո չեն շարունակի ստանալ անվանական կրթաթոշակ, և այդ կրթաթոշակի համար

ներկայացվում են երկու նոր ուսանողներ առկա ուսուցման բակալավրիատի 3-րդ կուրսից: Գիտխորհրդի անդամները մասնավորապես.

ԼՄԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի առկա ուսուցման ուսանողներ Ժենյա Սարիկի Ղազարյանին, Լուիզա Ալբերտի Բարսամյանին, Անգելինա Արմանի Հայրապետյանին, Անահիտ Հակոբի Վարդանյանին, Թամարա Վաչիկի Կարապետյանին անվանական կրթաթոշակներ տրամադրելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Ա. Ջրբաշյանը, Ա. Սարգսյանը, Ս. Գրիգորյանը և ուրիշներ: Նշվեց, որ ուսանողները անվանական կրթաթոշակ կարող են ստանալ՝ 3-րդ կուրսից սկսած՝ հաշվի առնելով նախորդ 4 կիսամյակների բարձր առաջադիմությունը: Նշվեց նաև, որ անվանական կրթաթոշակի ներկայացված թեկնածուները ունեն բարձր առաջադիմություն և համապատասխանում են ներկայացվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի առկա ուսուցման ներքոհիշյալ ուսանողներին տրամադրել հետևյալ անվանական կրթաթոշակները՝

1. Ղազարյան Ժենյա Սարիկի՝ «Գրիգոր Նարեկացու անվան» - հայ բանասիրության ֆակ., առկա 4 - րդ կուրս,
2. Բարսամյան Լուիզա Ալբերտի՝ «Մեսրոպ Մաշտոցի անվան» - հայ բանասիրության ֆակ., առկա 4 - րդ կուրս,
3. Հայրապետյան Անգելինա Արմանի՝ «Խորեն Պալյանի անվան» - հայ բանասիրության ֆակ., առկա 4 - րդ կուրս,
4. Վարդանյան Անահիտ Հակոբի՝ «Ստեփան Ալաջաջյանի անվան» - հայ բանասիրության ֆակ., առկա 3 - րդ կուրս,
5. Կարապետյան Թամարա Վաչիկի՝ «ԵՊՀ-ի անվան» - հայ բանասիրության ֆակ., առկա 3 - րդ կուրս:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ նշվեց, որ ամբիոնները և դեկանատը ընթացիկ հարցեր չունեն:

**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ